

ները մինիստրութիւն կազմելու համար
զադանի են պահուում:

„France“ լրագիրը մի հետաքրքիր տե-
ղեկութիւն հաղորդեց իշխան Բիսմարկի և
գերմանական զեապան ֆարիցի մէջ իշխան
Հոֆենշթեյնի տեսութեան մասին վարդիւնում,
որի ժամանակ խոսակցութիւն է եղել Վա-
րսաւայի մինիստրութեան վերաբերու-
թեամբ: Բիսմարկ իբր թէ յանձնել է զե-
պանին յայտնել Ֆրանսիական հանրապե-
տութեան նախագահին, որ մի քանի ան-
ձանց մինիստր նշանակելը վատ տպաւորու-
թիւն կը գործի Եւրոպայի մէջ: Ի միջի-
այլոց գերմանական կանցլերը անուանել էր
հանրապետական կուսակցութիւններէ մե-
կի առաջնորդ Ֆրեյլին: Վաճառատա յայտ-
նել է, որ ոչինչ չունի այդ առաջարկու-
թիւններէ դէմ և խոստացել է նրանց ի
նկատի ունենալ: Գերմանական լրագիրները
հերքում են այդ լուրը: Գերմանական կա-
ռավարութիւնը երբեք չէ միջամտել Ֆրան-
սիայի ներքին գործերին և այժմ էլ չէ կա-
րող միջամտել: Այս իշխան Բիսմարկ և ոչ
Հոֆենշթեյն, Ֆրանսիական մինիստրութեան
կազմակերպութեան մասին հարց չեն բարձ-
րացրել: Գերմանիան միշտ յարգանքով է
միտարկել Ֆրանսիային և երբեք չի խան-
գարի միջազգային քաղաքականութիւնը:

Ֆրանսիական նոր մինիստրութիւնը գա-
նազանում է նախորդներէն ոչ թէ միայն
իր առաջնորդի բացառական դրոշմանք,
այլ և իր կազմակերպութեամբ: Ամինիստրա-
կան հարցի գլխաւոր հետաքրքրութիւնը
Վաճառատայի վրա էր: Կենտրոնացած, իսկ
Ֆրանսիական միտքը կարծես ոչ
միայն միտքով, այլ և զգացմամբ Ֆրանսիա-
կան առաջին մինիստրի ամենամեծ գծաւ-
որութիւնը եղել է մի խումբ միտանակ
մարդկերանց զանեղ, որոնք ներկայացնէին
պարզամեծական զգացումը: Կուսակցութիւն-
ները: Ֆրանսիական առաջին մինիստրի
դրոշմութիւնը շատ անգամ չափից դուրս
գծաւոր է եղել, որովհետեւ գրեթէ անկա-
րելի է միաժամանակ բաւականացնել մի
քանի կուսակցութիւններին, որոնց շահերը
և ձգտումները տարբեր են եղել: Մարշալ
Մակ-Մաճոնի նախագահութեան ժամանակ
պատգամաւոր Գուլեանը, յանձնարարութիւն
ստանալով նոր մինիստրութիւն կազմելու
մասին, այնքան եռանդով և աննշողու-
թեամբ աշխատում էր, որ հիւանդացու և
մեռաւ չափից դուրս շատ վրդովմունքնե-
րից: Վաճառատայի դրոշմութիւնը համեմատա-
բար լաւ էր: մինիստրների ընտրութիւնը
բացառապէս նրանց էր կախում և, եթէ
մինիստրութիւնը մինչև անգամ միայն Վաճ-
առատայի բարեկամներէ կազմվէր, ոչ պատ-
գամաւորներէ ժողովը և ոչ հանրապետու-
թեան նախագահը չէին բողոքի: Պատգա-
մաւորների ժողովը կատարեալ հաւատ ըն-
ծայից Վաճառատային: Իբրեւ մեծամասնու-
թեան առաջնորդին, իսկ հանրապետու-
թեան նախագահը թողլ տուց նրան կա-
տարեալ ազատութեամբ ընտրել իր ընկեր-
ներին: Այս և նոյն ժամանակ Վաճառատա պար-
տաւոր էր իր մինիստրութեան մէջ մտցնել
այնպիսի նշանաւոր դործիչներին, ինչպէս
Լէօն Սէ և Ֆրեյլին: Նա վերջ ի վերջոյ
չըջապարտեց իրան կատարելապէս անգոյն
մարդկերանցով, որոնք պատրաստ են կու-
սորել նրան հպատակելու: Դրանով է մեկն-
վում այն հանգամանքը, որ բանակցու-
թիւնները մինիստրութեան կազմելու սա-
սին գազանի էին պահուում:

Ֆրանսիական լրագիրներէն երևում է,
որ հասարակութիւնը անբաւական էր Վաճ-
առատայի երկար պատրաստութիւններէ

մինիստրութիւն կազմելու համար: Ամենքը
համոզված էին, որ Վաճառատա իր ապա-
րաւ պաշտօնակիցների համաձայնութիւնը
առաջուց ստացել է, և որ նոր մինիստրնե-
րի անունները պետք է հրատարակվէին
միւլ Ֆերրիի հրաժարականից յետոյ ան-
միջապէս: Բայց մեկնաւ, որ ոչինչ նախա-
պատրաստված չէր և որ բանակցութիւն-
ները սպասածից աւելի երկար տևեցին:
Մանուսնը երկար ժամանակ պահանջներ
խորհրդակցութիւնները Լէօն Սէի հետ: Այ-
նք համաձայնվեցաւ Վաճառատայի հետ քա-
ղաքական և ֆինանսական հարցերի վերա-
բերութեամբ: Պէտք է նկատել, որ Սէ,
գործելով սենատի նախագահի պատուաւոր
պաշտօնը, առիթ չունէր ցանկանալու փո-
խել իր պաշտօնը և ընդունել մինիստրի
պատասխանատուութիւնը:

ՆԱԽԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՆ

Կ. Պոլիս, 2 նոյեմբերի

Պոլսոյ հասարակութիւնը ամբողջ երկու շա-
բաթ է մի փափաղեան լսեփան անուն արկայի
անձնաւորութեամբ զբաղած է: Մանկութիւն
կերելի որ փարիզի ոստիկանութեան պէս, եր-
կայն բազմութիւն ունի, և կարող է իր մասնե-
րը մինչև Բոսֆորի եզերքները տարածել:

Ներսէս Պատրիարքի ժողովրդականութիւնը,
անձուրայ և վեհաձեռն արարքներ կերելի թէ
անկուսնի տալին փոշ եղած են և ցանկութիւն
ունի տեսնելու, որ Կ. Պոլսոյ պատրիարքական
տիտղոս միայ իր արարածներէն մէկը բազմի
իր ձեռքին պատրաստ և հոյ գործիք ըրած է
այստեղ քանի մը անարդ էակներ, որոնց ամե-
նէն իրան և աներեք այդ փափաղեանը ըլլա-
լով, շարունակ հրապարակին վրայ է, իր ձեռ-
քը ունի «Հայրենիք» անուն թղթի կտորը, և
իբրեւ ստացողը երեսփոխանական անուն ապուշ-
ներու ժողովը:

«Հայրենիք» մէջ յաճախ կարգացրել ենք այդ խա-
չատիկ արարածին մեծագործութիւնները, որոնց
յայտնի նշանաւոր է տապալել Ներսէսը իր գա-
հէն, անդադր յարձակելով անոր վրայ, ամբաս-
տանքով և զրգարանելով: Այդ մտկին առիթի դէմ
մարտակուս տեսարանը ծիծաղելի կրկնար թէ որ
այնքան զգուշիկ երևոյթ մը չունենար: Ստեփա-
նի պէս հազարներն անգամ կարող չեն խախտել
պատրիարքի հաստատուն գիրքը, որ ընդհանուր
ազգին համակրութեամբ վրայ կը յենու, և փա-
փաղեանի արարքներուն հարկարութիւն անգամ
հարկ չը կար տալու: Եթէ յարգեցած դաշխակ
զոքիներ ամեն սահմանը անցած չըլլար, «Ճա-
նը» ոչինչ բան է, բայց սիրտ կը պղտորէ կըստ
առաւոր:

Բազում ճիշդի թափել վերջը, փափաղեան
և իր ամենափոքր և ամենափոքր կուսակցութիւ-
նը, որ պատրիարքին անբաւական են և տապալել
զայն, ժողովրդեան անփառանքութիւնը գրաւելով
անոր վրայ, երբ տեսան, որ հասարակութիւնը
արձանարարեցով, ուսերը թոթովելով կը պա-
տասխանէ, եթէ չը թքնէր երեսին, անցնալ
ազգային ժողովի նիստին մէջ փափաղեան հար-
ցանդում մը ուղղեց պատրիարքին ըսելով թէ
պատրիարքարանի այլ և այլ ժամանակներ հը-
րատարակած հայրենակ գաւառներու մարդա-
համարներն ինչու հակասական են, և թէ ինչ
պատասխան ունի տալու թրթիքի և վերջինի
վերջի հրատարակած մարդահամարին՝ որ բոլո-
րովին հակասակը կը պնդեն հայոց բազմամար-
դութեանը նկատմամբ: Այս առիթով ուղեց
նաեւ, որ հայոց պատրիարքարանի քաղաքական
յարարքութեանց վրայ մանրամասն հա-
շիւ տալ Ներսէս ազգային ժողովին:

Այսպիսի ամենափափուկ ժամանակի մէջ,
երբ ամեն կողմէ հայոց թշնամիները գիրքը
չըջապարտած են, այս կերպ հարցում մը ընե-
լու ոչ միայն աններկի անխոնմութիւն մըն
էր, այլ և ինչ չար և ազգամիտ գիտաւորու-
թեամբ ըլլալը յայտ ցանկանալ կերակուր փա-
փաղեանի փափաղը պարզապէս ամենուն զա-
գափարը պղտորել էր և միմիայն քաղաքական
գործոց վերաբերմամբ տարակուս յարուցանել էր

ամենուն մտքին մէջ, պատրիարքի բռնած ըն-
թացքը անուղիղ և հակասական ցոյց տալով,
միանգամայն անուղղակի կերպով դաւաճանել
էր ընդդէմ ազգին և պատրիարքին տանկի կա-
ռավարութեան առաջ:

Աստու էր փափաղեան, որ պատրիարքը պի-
տի չուղէ խօսել և բացատրութիւն տալ և անոր
լուծութիւնը պիտի մեկնէր վերջը: Ինչպէս որ ու-
ղեր: Եւ երբ իր սպասածին հակասակ Ներսէս
պատրիարքն անոր օժիքէն բռնեց ըսելով ինչ
այստեղ, որ ոչ զած բացատրութիւնները թամ
այս փափաղեանի փափաղեանը անմիջապէս
խոսաւ առաւ ժողովին, հետը անեղով ժողովա-
կաններուն և հանդիսականներուն պարտական
ազգականները:

Այն որն ի վեր թէ իր համախոհ «Հայրենիք»
անուն փախուց: Թերթին մէջ և թէ «Մատիս»
մէջ ողորմելի փախուցով կը տքնի իր ազգամիտ
կամպայնը յառաջ տանել:

Հայոց առաջին անգամ եղած ազգահամարի
ժամանակ փափաղեանը զլսաւորապէս աշխատած
ըլլալով և պատրիարքին իր այս մասին ունեցած
հետաքննանք վրայ վստահութենէն օգուտ քաղե-
լով, երակայական թիւ մը ցոյց տուած էր, հա-
յրենիք թիւը շուրջ երկուք 40 կէս միլիօնի հա-
նեղով: Այժմ առանց իր մասնակցութեան երկ-
րորդ և երրորդ մարդահամարներ ալ եղան, թէ-
պէտ միշտ անկատար, բայց աւելի հաւանակա-
նութեան մաս փափաղեանի արարածը, ինչպէս
արդեն ըսած ենք, միշտ ազգային գործերէն եղեր
է: Այժմ ամեն առաջ պատրիարքէն խնդրել է
որ ազգային պաշտօն ստանալ: Եւ Եւսիփ, այն
է ներքին գործոց տեսչութեան պաշտօնը: որ
պատրիարքը բացարձակապէս մերժած է: Այն
որն ի վեր աւելի ստատկապէս սկսաւ թշնամա-
նել պատրիարքարանը իր ամբողջ պաշտօնեա-
կանով: Բայց հասարակութիւնը որոշած է զայն
յակամայն հրաժարելու իր նաեւ երեսփոխա-
նական պաշտօնէն: Բող այն ժամանակ լրագրու-
թեան միջոցով որքան ուղէ թշնաման պաշտօնի
վրայ գանուղները, բաւական է որ հիմակուան
պէս քիչ շատ արտօնութիւն չունենալով ազգա-
յին առանձին գործոց վրայ տեղեկանալ, կա-
րող չըլլայ, ինչպէս հիմայ կրնէ, Սայրա բաշայի
գործունի քաղաքները տալու:

Այս պարունի անակիցներէն, որք իրեն չափ
յայտնի համարակ զործելու անխոնմութեան
թիւնը չունեն, զլսաւորներն են: Գերայիշալ
լրագրի խմբագիրը, Ալաշայան անուն, որ միշ-
ն կէս բուր կաշառի հաւանող է: Պ. Քրիստոս-
տոս, որ շարունակ ազգային ժողովին մէջ ա-
մեղեցիկ խօսելով, իր ընկերները վստաւ կ'ու-
ղէ ինչ մեղեցիկները գրած են իրեն: Կ. Մէրեմ-
Դուլի, որ իր պարտաւոր ժամանակներուն մէջ
ազգականներուն անգամ կարող է պատասխանել խա-
րամանկութեան օգուտներուն վրայ: Ի. Պէրեան,
որ հարուստ է կրօն, դրամները վաշխաւու-
թիւն ըլլալով: Լուր հարստութեանը վրայ ճիշդ
տեղեկութիւն չունենք, բայց խիստ անուանակա-
նեղ: Ըլլալը գիտենք... վերջապէս փափաղեա-
նի կուսակցութեան մէջ զլսաւոր զի կատա-
րողն է իր վերջին լստիկան եպիսկոպոսը, ո-
րու զլսաւոր առաջնութիւններն են կիրք, փա-
ռասութիւն և նախանք: Սա է որ ուղղակի
Մանկութիւն հրահանգները կընդունի և կը հա-
ղորդէ միւսներուն: Մատիկէս կը կարծի որ էջ-
միւսներէն եպիսկոպոսը զարմածին պէս, չուտով
զինքը պատրիարք պիտի ընեն: Գերբն է ուրեմն
հասկնալ որ այնքան ատրիներ ուղտելով, հաճ-
ութիւնները հասած է հիմայ:

Կան շատ այս բանակներ մէջ ուրիշ մեկ քանի-
ներ ալ, բայց այնքան անուան անմիք են, որ
«Հայրենիք» գրաշարներուն հոգեւորներ չեն ուղեր
տալ անուններն շարելով:

Այս խառնակից կուսակցութիւնը որ պատ-
րաստ է իր շահերուն համար տանակոխ ընել ազ-
գին ամեն շահերը, որ դաւաճանել անգամ ետ
չը կենար, զի բաւ կը փչուի և արդէն սկսեր է
փչուիլ, վստաւ զի հրապարակել եղան իրենց ա-
րարքները: Մտ է ժամանակը որ խայտա-
ռակված, մատնախիչ եղած, պիտի անհետանան
ազգային տարաբնույթներ, վստաւ զի ընդհանրութիւնը
լաւ խնայաւ հիմայ ինչ տեսակ արարածներ ըլ-
լանին, մատնախիչ չընտան «Հայրենիք» անաշա-
նութեան, որ ազգային լրագրութեան մէջ առա-
ջինն է, որ շարունակ պաշտօն կը վարէ Ռիփաթի
ախտները մարքելու:

Լ. Ֆ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին Կ. Պոլսոյ հեռագրում են,
նոյեմբերի 7-ին: Լուր տարածվեցաւ, որ իբր
թէ Ռուսաստանը պահանջում է թիւրքիայից
պատերազմական ծախսերը հոգային վարձատրու-
թեամբ վճարել: Գեապանները հարցմունքներին
այդ առիթով պ. Նովիկով պատասխանեց հա-
ւատացնելով, որ անհիմն են այդ բոլոր լու-
րերը:

—Փարիզից լրագիրներին հեռագրում են նո-
յեմբերի 4-ին, որ Ֆրանսիայի զինուորական
մինիստրը հեռագիրներ ուղարկեց Տուրքիա և
Ալժիրիայի զինուորական զլխաւորներին, նա
այդ հեռագիրներին մէջ յայտնում է, որ կը հոգայ
իր ստորագրեալ դրոքերի մասին, և խոտանում
է ամեն միջոցներով պաշտպանել նրանց: «Siècle»
լրագիրը հաղորդում է, որ իբր թէ Վաթիկան
Ֆրանսիայի զիւլլաւատական բոլոր ներկայա-
ցուցիչներին չըջաքերականներ կազարկի, որոնց
մէջ կը բացատրի թէ մինիստրութեան փոփո-
խութիւնը բոլորովին չի փոխի Ֆրանսիական
կառավարութեան խաղաղասէր քաղաքականու-
թիւնը: Լուր կայ, որ զեպաններ են նշանակ-
վում: Շալվէլ-Լակուր-Բերլինում, Լէօն Րեյս-
Պետերուրգում, Դիւլաւալ-Լօնգոնում:

—Կ. Պոլսոյ հեռագրում են լրագիրներին,
նոյեմբերի 4-ին: Հեռագրում էր զաղթա-
կանութեան հարցի մասին անգլիական լրագր-
ների հետ թանակցելուց յետոյ, Բ. Կուրթ թոյլ
տուեց գերմանական, ռուսաց և բուլղարական
հրէաներին զաղթել թիւրքիա, բայց Պալեստի-
նայից, թիւրքաց հպատակութիւնը ընդունելու
պայմանով:

—«Paris» լրագրում մէկ յօդուած է տպված,
որը բացատրում է նոր մինիստրութեան ոգին
Վաթիկանայի տեսակետից, Սիլիքից Վաթիկան
ցանկանում էր կորսնէալ չէրս նախագահնե-
րից: Կազմել, այսինքն, որ մինիստրութեան մէջ
մտնէին Ժիւլ Ֆերրի, Լէօն Սէ և Ֆրէյլին, ո-
րոնք մի ժամանակ առաջին մինիստրներ են ե-
ղել: Բայց դրանք իրանց պայմաններն էին առա-
ջարկում և մի և նոյն ժամանակ չէին ցանկա-
նում ժամանակել: Վաթիկանայի ստատիկ արմա-
տական քաղաքականութեանը: Այնպէս որ նա
ստիպեցաւ մեծ անունները և ազգանդները
միացնելուց հրաժարվել, որ կործանալ իր պը-
րօգրամը զլսաւոր կէտերը ազատ կերպով ի-
րադրօնել: Նոր մինիստրութիւնը կազմված է
Վաթիկանայի աշխատակիցներից և բարեկամ-
ներից, որոնք քաղաքական գործողների նոր
սերդին են պատկանում և որոնք աստ տարուց
աւել չը կայ որ քաղաքական աստարեղ են
դուրս եկել:

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԵԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 նոյեմբերի: Էկա-
պիւրները նոյեմբերի 11-ին որոշեցին, պատ-
մել խմբիքների կանոնադրութիւնը գեղծե-
լու, առանց փողի գինի տալու, անշափա-
հաներին և հարրածներին գինի տալու հա-
մար, որոնք ընդունել են այդպիսի հրաւեր:
Անշափահանները մինչև 16 տարեկանը ոչ
աւանց ուղեկցի կրկնալ չեն կարող մտնել:
Մշտական հարբեցողների վրա հասարակու-
թիւնը հոգարարածներ կարող է նշանակել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 12 նոյեմբերի: Պետական
բանկի 50% տոմսակը առաջին շրջանի
արժէ 94 ռ. 75 1/2 Կ., երկրորդ 91 ռ. 12
Կ., երրորդ 92 ռ., չորրորդ 90 ռ. 87 Կ.,
հինգերորդ 90 ռ. 87 Կ., ներքին 50% ա-
ռաջին փոխառութեան տոմսակը արժէ
220 ռ., երկրորդ 213 ռ. 50 1/2 Կ., արեւե-
րեան առաջին փոխառութեան տոմսակը
արժէ 89 ռ. 75 1/2 Կ., երկրորդ 89 ռ. 62 1/2
Կ., երրորդ 89 ռ. 75 Կ., օսկի 7 ռ. 74 Կ.:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԴՐՈՒՆԻ